Թեստ 1

1-12-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

1. Ընդգծված ռ-ն արտասանվում է *կo*

1) անորոշ
2) բազմռտանի
3) բարձրառձ
4) բախտորոշ

բառում:

2. Հատուկ անունների բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող շարքն է՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԻԲԻՐ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
2) ԿՈՒԼԱ ԹԵՐԱԿՈՂԶԻ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ, ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ
3) ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ, ԲԵՐԻՆԳԻ ՆԵՂՈՒՑ
4) ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

3. Բոլոր բառերի բաղադրիչները գծիկով գրվող շարքն է՝

1) կում (կում), կազմ (պատրաստ), ռուս (ճապոնական)
2) տալ (առնել), ռազմա (ծովային), կողք(կողքի)
3) կանաչ (կարմիր), կիսատ (պռատ), խոսք (տալ)
4) լեփ (լեցուն), ժուկով (ժամանակով), ի(զուր)

4. Դարձվածքի բացատրության սխալ կա

1) խոսքը երկու չանել- անմիջապես կատարել
2) փորում սիրտ չմնալ- սաստիկ վախենալ
3) դարձի գալ- ճիշտ ուղու վրա կանգնել
4) երկու կրակի միջև լինել- խիստ շոգին դիմանալ

շարքում:

5. Պարզ բառերի շարքն է՝

1) կարագ, խնձոր, ուշք
2) արմատ, քամի, անտառ
3) անձրև, պարտեզ, նավակ
4) ճամփա, խնդիր, համեղ

6. Հոմանիշ բառերի շարքն է՝

1) անսայթաք, անշեղ, ճիշտ
2) ապավեն, պաշտպան, հենածող
3) առևանգել, հափշտակել, փարվել
4) մակաբույծ, պորտաբույծ, ծրիակեր

7. Հատկացուցիչ կա

1) Արագածի պսակաձև գագաթը չէր երևում:
2) Ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում:
3) Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր:
4) Ծուխը մշուշի պես պատել էր փողոցը:

նախադասության մեջ:

8. Դերանունների շարքն է՝

1) մենք, այսպես, որևէ, հետո
2) բոլորը, որոշ, սա, մեկմեկու
3) դու, երբ, այդպիսի, իրավ
4) ինքը, ինչքան, որպես, ոչ մի

9. Աստանցավոր բայերի շարքն է՝

1) մտնել, արագացնել, թռչկոտել
2) մոտենալ, պարել, նկարվել
3) պոկոտել, բացատրել, վազել
4) կտրատել, փախչել, խմեցնել

10. ..... , ավելի շատ եմ զգում յուրայիններիս, ընտանիքիս ու ընկերներիս կողքին լինելու կարիքը

նախադասությունը քերականորեն և տրամաբանորեն ճիշտ կստացվի

1) Մանկությանս լաստը հեռանալով
2) Մանկությանս լաստը հեռանալուց հետո
3) Ինչքան հեռանում է մանկությանս լաստը
4) Մինչ մանկությանս լաստի հեռանալը

տարբերակը տեղադրելու դեպքում:

11. Մակդիր կա

1) Կյանքում ամեն սեր լինում է տարբեր...
2) Ուր որ նայում եմ, քարե բարձունք է...
3) Փայտահատը հին երգն էր կրկնում...
4) Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

նախադասության մեջ:

12. Կետադրական սխալ կա

1) Քառորդ ժամ չանցած, կեսգիշերին ձորից լսվեցին ահարկու պայթյուններ:
2) Որպես բնական ամրություններ՝ լեռները չորս կողմից շրջապատել են Մուշի դաշտավայրը:
3) Հեծած սևաթույր նժույգը, սարեր ու ձորեր կտրելով՝ սուրում էր սիգապանծ ասպետը:
4) Լիլիթը լսում էր Ադամին, և մեղմ ծիծաղը հավաքվում էր շրթունքների շուրջը:

նախադասության մեջ:

13-16-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

13. Նախադասությունները դասավորի՛ր տրամաբանական հաջորդականությամբ:
Գրի՛ր միայն նախադասությունների համարները:

1. Սկսում էին արյունահոսել մարդկանց լնդերը, շարժվել ատամները, և նավաստիները թուլանում և ուժասպառ վայր էին ընկնում. լնդախտն ավելի շատ զոհ էր խլում, քան նավաբեկությունը:
2. Իսկ 300 տարի առաջ բժիշկներն անգամ չգիտեին, որ այդ հիվանդությունն առաջանում է սննդի մեջ C վիտամինի պակասից:
3. Ով կմտածեր, որ նավարկության մեկնելիս մի քանի տուփ C՝ վիտամին վերցնելը կպաշտպանի այդ սարսափելի հիվանդությունից. 20-րդ դարում այդպես դատելը հեշտ է:
4. Դեռ հնուց ծովային նավերի վրա անսպասելիորեն հայտնվում էր լնդախտ կոչվող սարսափելի հիվանդությունը:

Պատասխան՝ _____

14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:

Շաբաթաթերթը վերլուծական հոդված է հրատարակել կուսակցության գործունեության վերաբերյալ:

Պատասխան՝ սխալ է՝ _____
պետք է լինի՝ _____

15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:

Ներկուսակցական կռիվները վերջին հաշվով թուլացնում են մեր պետությանը:

Պատասխան՝ *սխալ է՝* _____
պետք է լինի՝ _____

16. Տրված բառերը տեղադրի՛ր բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների:

Հեգնանքով ....., որ արդեն ..... երեխայի լացին, ու այս կատարյալ անդորրը ..... չէ ոչ քնելու, ոչ էլ արթուն ..... համար:

(բավական, մտածել, մնալ, կարոտել)

Պատասխան՝ 1.---------- *2.*----------

3.---------- *4.*----------

17-32-րդ առաջադրանքները կատարի՛ր ըստ տեքստի

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Անիի գահազուրկ արքան՝ Գագիկը, որ ոչ միայն խելացի ու իմաստուն այր էր, այլև խիզախ ու աներկյուղ զորական, շարունակում էր կրել Բագրատունյաց թագը և չէր երկնչում ոչ մեկից:
2. Մի անգամ Գագիկը, քաջազունների իր ջոկատով կանգ առավ Կեսարիա քաղաքում. փսփսուքներ էին հասել արքայի ականջին, թե քաղաքի մետրոպոլիտը՝ ամբարտավան ու հայատյաց Մարկոսը, անընդհատ անարգում է հայերին. անպատկառ հույնն այնքան էր լկտիացել, որ իր շան անունը Արմեն էր դրել:
3. Պատվախնդիր արքան՝ բնավորությամբ հանդուգն ու համարձակ, որոշեց պատժել հղփացած բյուզանդացուն:
4. Մարկոսը, լսելով արքայի՝ իր տանը իջևանելու ցանկության՝ մասին, պատշաճ ընդունելությամբ և մեծ շուքով հյուրընկալեց հայոց թագավորին:
5. Երեկոյան՝ գինարբուքի թեժ պահին, Գագիկը՝ մի թեթև գինովցած, դիմեց Մարկոսին, որ վերջինս կանչի իր շանը: 6. Մարկոսը, կռահելով արքայի միտքը, փորձեց չլսելու տալ, սակայն Գագիկի՝ առարկություն չընդունող խոժոռ հայացքից սարսափած՝ ճարահատյալ տեղի տվեց: 7. Վախից սփրթնած Մարկոսը նայեց հայոց արքայի՝ վրիժառությամբ լցված սարսռազդու աչքերին ու կմկմալով սկսեց արդարանալ, թե շունը քաջ է, դրա համար է ինքը նախընտրել Արմեն անունը:

II

1. Արքան շարժեց աջը, և թիկնապահները բերեցին նախօրոք պատրաստած պարկը. նախ հսկա գամփռը հայտնվեց պարկում, ապա թանձրամարմին Մարկոսը: 2. Դագանակների ծանր հարվածներից գազազած շունը հարձակվեց ու սուրսայր ժանիքներով սկսեց բզկտել տիրոջը: 3. Քիչ անց դադարեց Մարկոսի օրհասական ճիչը, ապա կատաղած շան մռլտոցը:
4. Այսպես հայերին անարգողը շան բաժին դարձավ և շանսատակ եղավ:

17-20-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

17. II հատվածից դու՛րս գրիր մեկ անկանոն բայ:

Պատասխան՝ _____

18. I հատվածի 2-րդ նախադասությունից դու՛րս գրիր հարադիր բայը:

Պատասխան՝ _____

19. II հատվածից դու՛րս գրիր մեկ բարդ բառ:

Պատասխան՝ _____

20. I. 3-րդ նախադասությունից դու՛րս գրիր հետադաս որոշիչները:

Պատասխան՝ _____

21-25-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

21. Ցուցական դերանուն *չէ*՝

1) դրա
2) այսպես
3) այնքան
4) ոչ մեկից

22. I հատվածում մակբայ պարունակող նախադասություն է՝

1) 1-ը
2) 2-րդը
3) 3-րդը
4) 4-րդը

23. I հատվածում ըղձական եղանակի բայ պարունակող նախադասություն է՝

1) 1-ը
2) 3-րդը
3) 5-րդը
4) 6-րդը

24. Մարկոսի մասին բնորոշումներից ո՞րը ածական *չէ*:

1) հայատյաց
2) ամբարտավան
3) անպատկառ
4) հղփացած

25. I հատվածում կապ պարունակող նախադասություն է՝

1) 1-ը
2) 2-րդը
3) 3-րդը
4) 4-րդը

26-29-րդ առաջադրանքներում գրի՛ր պատասխանը

26. I հատվածից գրի՛ր մասնավորող պարագայական բացահայտիչ պարունակող նախադասության համարը:

Պատասխան՝ _____

27. I հատվածից դու՛րս գրիր գործիական հոլովով դրված երեք գոյական:

Պատասխան՝ _____

28. Գրի՛ր II հատվածի այն նախադասության համարը, որում ենթակայական դերբայը ենթակայի պաշտոն է կատարում :

Պատասխան՝ _____

29. I. 7-րդ նախադասությունը քանի՞ բաղադրիչ պարզ նախադասությունից է բաղկացած:

Պատասխան՝ _____

30-32-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

30. Ձայնավորի սղում կա

1) I. 1- ին
2) II. 1 - ին
3) II. 3 -րդ
4) I. 6 -րդ

նախադասության մեջ:

31. *Շունը՝ հսկա մի գամփռ, աշխույժ թափահարելով թավամազ պոչը, մոտեցավ տիրոջը:*

նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:

1) շունը - հասարակ գոյական
2) թավամազ - որակական ածական
3) թափահարելով - բայ, գործիական հոլով
4) տիրոջը - անձ ցույց տվող գոյական, որոշյալ առում

32. *Դագանակների ծանր հարվածներից գազազած շունը հարձակվեց ու սուրսայր ժանիքներով սկսեց բզկտել տիրոջը:*

նախադասության մեջ ընդգծված բառի կատարած պաշտոնն է՝

1) ենթակա
2) հանգման անուղղակի խնդիր
3) ուղիղ խնդիր
4) անջատման անուղղակի խնդիր